ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 71 - Ա **29 հունվարի 2016 թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 17-Ի N 218-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասի, <<Հանրակրթության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010 թվականի մարտի 18-ի N 113-Ն հրամանով հաստատված <<Հայաստանի Հանրապետության <<Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն>> պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման կարգի>> 17-րդ կետի պահանջը

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2010 թվականի հունիսի 17-ի <<ՀՀ Գեղարքունիքի մարզի Ախպրաձոր գյուղի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի անվանական կազմը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2007 թվականի ապրիլի 26-ի N107-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> N218-Ա որոշման 1-ին կետում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը՝

1)<<Գասպարյան Վալիկո/մանկխորհրդի ներկայացուցիչ/>> բառերից հետո լրացնել <<երեք տարի ժամկետով>> բառերով.

2)<<Խաչատրյան Թաթուլ/մանկխորհրդի ներկայացուցիչ/>> բառերը փոխարինել <<Մանուկյան Մանուկ Լիմոնի/մանկխորհրդի ներկայացուցիչ/-երեք տարի ժամկետով>> բառերով.

3)<<Ղազարյան Արտուրիկ/ծնողխորհրդի ներկայացուցիչ/>> բառերը փոխարինել <<Ղազարյան Արտակ Գագիկի/ծնողխորհրդի ներկայացուցիչ/-երեք տարի ժամկետով>> բառերով.

4)<<Ղուկասյան Շիրակ/ծնողխորհրդի ներկայացուցիչ/>> բառերը փոխարինել <<Սարգսյան Արտաշես Մայիսի/ծնողխորհրդի ներկայացուցիչ/-երեք տարի ժամկետով>> բառերով.

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՌԱՖԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ